

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՑՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐԾԱՅՐ ՔԱՂԱՆԱՅ ԿԵԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

« ՇԱԲԱԹ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1911 »

ԹԻԻ 45

ԲՈՔԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ. — Դեղօն

Աղօթքը

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏ. ԸՄԲՈՆՈՒՄՈՎ. — «Եւ
եղիցին երկոքեան ի մարմին մի»

ՏԻՊԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՆԻԹԻՒՆ. — Հ. Բ. Ը. Մ.

Ունեւանայ տեղեկագրին առթիւ

ԿԱԹՈՂ. ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ. — Նամակ Դաւրէժէն

Մամոյ արծազանք

Սմերիկահայ գողճեր

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Կաթող. քննարկութիւնը, Գա-
լառներու անապահովութիւն , եւ շաբաթուան
ուրիշ լուրեր

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ

ԵՓԵՍ ԽՈՒՐԻ

ՆԵՐՍԷՍ ՔԶ. ԹԱՎՈՒԲՃԵԱՆ

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՂԱՆԱՅ

ԱԿԱՆԱՏԵՍ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

»

« ՏԱՃԱՐ »-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գիմն առ Զարմայր Քահանայ Կեղիւրեան , Կ. Պոլիս, Պեհլիքաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده « داجار » خزانة مديرى باباس زارماير اقدى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՍԱԳԼՈՒԻ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ՁԻՆ ՀԱՅ ԴԲԱՍԱՏՈՒՆ

ԴՐԱՍԱՆՆԱԿՆԵՐԸ ԱՌԺԱՄԵԱՑ ԿԵԴՐՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԵՆ

ՍՈՒՆՆՈՒԼ, ԴԱԹՎՈՐԱԾՈՒ ԿԱՆ

Հայկական սոյն ձեռնարկի հաստատութիւնը կ'ընէ փոխառութիւններ՝ առեւտրական տոմսերու, մուրհակներու, փոխանակագիրներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու եւ բեռնագիրներու վրայ:

Կուտայ շէքեր, վարկագիրներ, փոխանակագիրներ եւ հեղադրական վճարումի հրամաններ՝ ինչպէս թուրքիոյ նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը պնէ եւ կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր եւ պարտաթուղթեր, թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր ծառայող հրապարակներուն վրայ, ինչպէս եւ օտար գրամներ:

Կը գանձէ եւ կը վեճէ փոխառական տոմսեր, մուրհակներ, փոխանակագիրներ, բաժնեթուղթեր եւ կտրոններ:

Կ'ընդունի զրամական աւանդներ նպաստաւոր պայմաններով:

Դրամատունը հաստատած է Ս.Ե.Ե.Ե. տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մէջ համայնքին մեջ ֆաշալերեղու համար Կ'ընդունի ֆանդիկնք (25) դրոշեկ սխեմով գումարներ:

Դրամատունը կը կտուրէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ եւ թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու եւ ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում եւ արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական եւ ճարտարտրուեստական ընկերութիւններ եւ կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրագումար շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 45

ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ

(ԳԵՂՕՆ)

Կաղնի մը պէս երկնուդէ ու հասարակաց, որ արհամարհած դարերու վայրագ ուրականներն ու փոքորիկները, շանքերն ու սահմանները, յաղթապանն ու խռիւս կը ցցուիս երկինն ի վեր, դուն, ո՛վ Հայկական եկեղեցիս, ա՛յսան երկար կուրծք տուած անլուր հարուածներու, իսկ լուծ ու սրնձգութիւններու ու ահաւոր կամայականութիւններու, կը կանգնիս այսօր վեհօրէն հարագաս, ու հաղորդէն կենսունակ: Հիմքերդ՝ շատ խոր Հայ ցեղին հոգիին անյսակ խորներուն մէջ հաստատուած են ամբողջ, ու զեղանիլ բարունակներդ՝ վերը՝ կապոյցներու դիւքավառ տարածութեան մէջ քաթաւուն . . . :

Ո՛վ պիտի պատմէր մեզի քու փառահեղ անցեալդ՝ օծուած մարտիրոսական շուքով, դուազուած ցաւի ու արհաւիրքի անգիր պատկերներով, անցեալդ՝ որ արդէն անգուգայան, անօրինակ պատմութիւնն իսկ է հալածական, ցաւասանջ բայց ազնիւ ու խոռ. մնալից ցեղի մը, որ՝ Այն է անոր բոլոր

բարձր ներշնչումներուն, մարդկայնական առաջխաղացումներուն, վսեմ հաշուքիւններուն, եւ որ մայրն է անոր հաղափական դիմադրումներուն, վիթերուն ու զրկումներուն անոր յոյսերուն, իղձերուն ու գոյութեան իրաւունքին :

Պատմութեան մշուշներուն մէջէն կը վերլիւծեմ այսօր քու կեանքդ համակ, ո՛վ իմ հաղորդիկ եկեղեցիս: Ու ի՛նչ հոգեցունց յուսեր կ'ապակեմ եռօրէնս, ի՛նչ սահմանեցուցիչ անցքեր կը խռովեն իս, ու ի՛նչ անգուստ խանդաղասանք մըն է որ կը համակէ հոգիս: Պարզուկ կոչնակդ կամ խաչակիր գմբէթդ ինչե՛ր չի պատմէր . . . : Դարեր իրենց բովանդակ արեւմտեան ու փառքերով կը բնանան կողմիդ: Ու այսպէս՝ ո՛րչափ ցնցով պատկերացումներ ունիս, ու ասոր հակառակ որչա՛փ հարագասութիւն, սեր ու հիմն օրերու անուշութիւն . . . :

. . . Սա՛յլն չէ՛, ամէն պատահար սրանցած է քու վրայիդ. իր ցաւագին հետքը բոլորած է հոն անվրէպ :

Հասիմական կեղծպարծես ծեսերը, յուսական փառքն աւելորդապաշտութիւնները ու պարսկական խաւարամած հաւատալիքները, ամենին ալ իրենց կարգին՝ մուս գործած են մեզդ ու իրենց ազդականութիւնը զգալիօրէն ներմուծած :

Ու, դուն քեւ աննուան ուժգնութեամբ, անտեղիսալի աննկունութեամբ ուզած ես փոխադարձաբար ուրոյն դիրքիդ վրայ լուսարձակ պայցով կանգուն մնալ, բայց վերջապէս անհասարկ կռիւին մէջ տեղի տալով, խաբարուած ես էի մը, եղծուած փոխադարձութեան : Օ՛, ես հոգիի՛դ կը ցանկանայիմ : Կ'ուզեմ որ փարասին այդ մեղսները, հային անոնք մութին քումքերուն նման, որ կը չֆամսն արեւոյսին կեանքար Եղբերուն առջեւ : Կը զգամ զսնել փոխադարձութեան մէջ բեկորները հիւսուող, որոնք պատմութիւններ են :

Ու ո՞վ պիտի չուզէր տեսնելու ինք՝ պարզ գեղեցկութեանդ մէջ պատկանելի, անկեղծ հարազատութեանդ մէջ պատկանելի, ու իսկական վստահութեանդ մէջ պակասելի :

Մտերմներ քառած են արեւի վրայ : Պատկերներ, փերթներ, այն վաղնչական կեանքներ, երբ Սահալներ, Մետապներ, Նարեկացիներ ու Ներսէսներ իրենց մոգական շուքով կը սրափեցնէին մեծապատիւ քմերով տառապող Հայ գեղը, երբ Շնորհալիներ, իրենց բանաստեղծական հոգեհարսուտ շարականներով կը յուզէին, կը լացնէին, ու աստուածեան սիրտով կը լեցնէին անոր հոգին, ու երբ Նարեկացիներ մեղամաղձութեամբ շարունակ խորիմաս ու ջղուտ փերթներով Անհունին վեհութիւնը կը տալէին ու բարութեան ու արդարութեան դրօշին տակ կը կանչէին Արարատին ձագուկները : Ու ասոնց ամենուն ներքնաբանը դուն էիր, ո՞վ մայրենի եղբայրս, անոր համար որ փոքրիկ մէջն էր Հայուն մը տանութիւնը, ազգայնութիւնը, Յոյսը, Սէրը, Նրազը : Պատերդ ներկուած են կարմիր արիւնով, ու փառերդ բարձրացած են Մարտիրոսներու սուրբ ոսկորներուն վրայ : Վարդաններ, Վահաններ փայփայեցին ինք, ապրեցուցին ինք եւ դուն ապրեցուցիր Հայութիւնը :

Յարգա՛նք ինք :

Քանի՛ կ'ունենա ամբարտակներու պէս խորտակուած ես ու իրենց ձեռքերով իսկ կնքած գեղերու մահուան դատարանը : Չեմ յիշեր երբե՛ք, չիկայ հաս մը քեզի նման, որ ալլակոսն, ալլազգի եւ անհունօրէն ա-

ւելի զօրաւոր տարբերութեամբ նուաճումներուն, բաղխումներուն, սեղմումներուն ու յորձանգներուն մէջէն պսնած ըլլայ իր զաւակները :

Նրեկուն իրականութիւնները ո՞վ չի յիշեր : Ի՛նչ արիւնտ յիշատակներ են անոնք : Այեթի ահաւորութենէն սարսափած, զահանգած հոգիներ, զառամած ծերեր, հերարձակ կոյսեր ու շմուրած պզտիկներ հեռի հեռ կը վազեն դէպի ինք, ապրելու համար . . . :

Ո՞վ ապաւէն եղաւ անոնց : Դո՛ւն, մայրենի եղբայրս, դո՛ւն էիր որ անվկանդ կողերդ պարզեցիր բոնութեան զննակներուն ու ետքանկներուն :

. . . Ու օր մը, ցանկալի օր մը, ցրծութեան ու երջանկութեան օր մը, ըղձալի վերադարձն ալ պիտի երկնուի, պիտի բանաստեղծութեան հաւաքելու համար բոլոր ձագուկներդ անոնց տակ, դուն ալ մերկացած օտարամոտ մեղսներէ : Որովհետեւ, դուն ես ձաւարանը Հայ հոգեբաղձութիւններուն, Աւանդապատիւ տոհմային նուիրականութիւններուն, Պատմութեան գեղային պահպանումին ու ազգայնական գոյութեան, ու Սիրք բախառայած Հայութեան : Որովհետեւ, դուն պիտի ըլլաս դիւցազնական Մայրը յոգնասանց ու հալածական Հայ ազգին, որ սա՛ իրականութեամբ տարածութիւններու ծովին մէջ անդէկ կը տատանի տակաւին, աչքերը Արարատին տեսնած . . . :

ՍՍ.ՀԱԿ-ՄԵՍՐՈՂ

ԱՂՕԹՔԸ

Աղօթքը Աստուծոյ մօտենալու, անոր հետ խօսակցելու համար հողիւոր ինքնամիտփութեամբ մըն է, մեր հոգեկան-բարոյական պէտքերուն համար առ Աստուած եղած ներքին ինքնաթիւղադրական կոչում մը՝ աշխարհամերձ հայեցողութեամբ, որուն պէտք է լծորդուած ըլլան մաքուր զգացողութիւններ զոր պարտինք ունենալ առ Աստուած . մեր սիրտը չնորհակալութեան չիւր զգացումներով զեղուն պէտք է ըլլայ իր աստուածային շնորհներուն ու երկնային պարգևներուն փոխարէն :

Աղօթքը՝ մարդուս սա Աստուած ունեցած էական ու նուիրական պարտականութիւնն է, զոր Աստուած կը պահանջէ մեզմէ մեր փրկութեան համար։ Աղօթքով, մինակ աղօթքով է որ կը սփոփուինք, կը մխթարուինք մեր ամենէն զանազակիժ ցաւերուն ու զվլխիչ տառապանքներուն մէջ։ Մարդ հոգեկան կամ բարոյական անհամար կարօտութիւններ ունի, որոնց մեր բնական սւթերով կամ նիւթական մըջոցներով չենք կրնար բաւականութիւն տալ։

Ս. Գրքէն կը սորվինք թէ միայն Աստուծոյ Հոգին կարող է բարեփոխել մեր սիրտը, զգացնել մեզ մեր մեղապրելի եւ անհաճոյ թերութիւնները, եւ թելադրել մեզ փէպի փրկութիւն։ Աշխարհային երեսելի եւ աներեւոյթ փորձութիւններուն զիմապրուելու համար նա միտոյն կ'ուժաւորէ ու կը զօտեպնդէ զմեզ, կը լուսաւորէ մեր թմրած ու խաւարամած սրտերը, կը լրացնէ մեր հոգեկան պէտքն ու կարիքը։ Նորա նախախնամութիւնն է որ մեր գեղեկոտ քայլերը կը զգուշացնէ կորստական ձամբաներէ։ Աղօթքը անհրաժեշտ պարտք մըն է ամէն անոնց՝ որոնք Աստուածային շնորհներն ու ողորմութիւնը վայելելու ցանկութիւնը ունին ու ծարաւ կը զգան իրենց սրտերուն մէջ։ Ով որ չուզեր աղօթել ու կը փորձէ ուրանալ անոր ուժը, ճշմարտութեան գէժ աքացի կը փորձէ։

Մարդ առանց աղօթելու ալ կարող է վայելել այն ամէն բարիքները զոր Աստուած բնութեան մէջ լիառատ կերպով սփռած է անխտիր թէ՛ բարիներուն թէ՛ չարերուն համար։ Բայց կը զրկուին այն թանկագին բարիքներէն ու ողորմութիւններէն, որ հոգեւոր են եւ բարոյական։ Եթէ Աստուած միայն խնդրողներուն պարգեւած է իր հոգեւոր ողորմութիւնները, այս չի նշանակեր թէ պակաս է անոր բարութիւնը, կարողութիւնը եւ ճանաչողութիւնը, այլ պատճառը այն է որ խնդրողները միայն զգացած են Աստուծոյ ողորմութեան հարկաւորութիւնը, ճանչցած են անոր շնորհներուն արժէքը, եւ

գիտին թէ անով միայն կարելի է յառաջանալ պէպի երջանիկ կեանքը, դէպի անմահութեան օթարանը։ Աղօթքի ուժին չհաւատալ կամ սկեպտիկ հայեցողութեամբ անոր կարեւորութիւն չընծայել, կը նշանակէ մերժել այն ամէն Աստուածային շնորհները, որոնք արուեստն մեզ Յիսուս Բրիստոսի միջոցաւ։ Ուրեմն աղօթքը մարդուս համար փառաւոր իրաւունք մըն է Աստուծոյ հետ խօսելու։ Ուրեմն աղօթքը սուրբ ու սրբութեան ճամբայ մըն է, որով կ'առաջնորդուինք, սուտէն անսուտին, սչխարհայինէն՝ անգրաշխարհեանին, նիւթականէն՝ աննիւթականին, բնականէն՝ գերբնական կեանքին։ Աղօթքի միջոցաւ է որ Աստուծոյ կը ներկայանանք, կը տեսնենք անոր կատարելութիւնները ու կը զգանք մեր ոչնչութիւնը, մեր անկարութիւնը եւ մեր անզօրութիւնը։ Մէկ խօսքով աղօթքը կրօնի նպատակն է եւ ուժը անոր։ առանց աղօթքի կրօնը սոսկ բառ մը կ'ըլլայ աննշան ու աննպատակ։

Մարդիկ յաճախ կը բողոքեն թէ իրենց աղօթքը անպտուղ կը մնայ եւ իրենք վաշտապար կ'աղօթեն։ Այնպիսիները չեն աղօթելու այնպէս ինչպէս հարկ է, «Աղօթքը եւ ոչ առնուք վասն զի չարաշար խնդրէք»։ (Յակը. Դ. 3)։ Ուրեմն աղօթքը արժանաւոր ու արդիւնաւոր ըլլալու համար պէտք է ունենայ այն զգացողութիւնները եւ պայմանները՝ որոնք հարկ անհրաժեշտ են աղօթքին ընդունելութեան համար։ աղօթքը պէտք է մաքուր, ազատ, ուրախ սրտով ըլլայ։ Սիրտն է բոլոր բարի ու արի զգացողութիւններուն աղբիւրը։ Մտիպմամբ կամ ձանձրութեամբ եղած աղօթքը աղօթք չէ եւ չունենար սպասուած արդիւնքը։ Աղօթքի նիւթը մեր ազատ կամքին կախում չունի։ Մարդ իր այլազան ցանկութիւններու եւ ծովածաւալ կարօտութիւններու յարկերնով մէջ կրնայ մտլորիլ ու չփոթիլ, եւ խնդրել այնպիսի բան մը որ անպատուութիւն ինի Աստուածութեան եւ մեզս մարդկային կոչման։ Աստուծոյ կամքը պէտք է ուղղիչ ըլլայ մեր խնդրքներուն, եւ ոչինչ պէտք է խնդրենք հակառակ անոր կամքին։ «Եւ այն է համարձակութիւն զոր ունիմք մենք առնալ, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ»։ Յովն. Ա. թուղթ, Ե. 14։

Սիւ

ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ

(Ծրանս. քաղցնանաբար)

ԱՄՈՒՆՈՒԹԻՒՆԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՈՎ

Հարսնիքներու եղանակին մէջ ենք, եւ մէկ երկու տարիէ ի վեր գոհութեամբ կը նշմարուի պատկառութեանց աւելնալը՝ նոյն իսկ մայրաքաղաքիս մէջ։ Դժբախտաբար, սակայն, նոյն համեմատութեամբ աւելցած են ընտանեկան վէճերը, եւ թերթիս անօրէն խմբագիրը, իբրեւ Դատաստ. Խորհրդոյ պնդամբ, սրտի սեղմումով կը տեսնէ քանի՜ քանի՜ նորակազմ ընտանեկան բոյներու քայքայման ճամբան բռնելը։ Ասիկա արդիւնք է ամուսնացող երկսեռ երիտասարդներու, — մասնաւորապէս այրերու, — շատ թեթեւ վերաբերումին՝ ամուսնութեան մեծ, նուիրական Խորհուրդին հանդէպ, որուն յաճախ աշխարհային պարզ պայմանադրութեան մը չափ իսկ կարեւորութիւն չընծայուիր։ Հետեւապէս, այժմէական եւ գերազանցօրէն օգտակար է ընթերցողին համար՝ անգլիկէն ամսամերթէ մը քաղուած յետագայ յօդուածը, զոր նոր աշխատակից մը, Արթ. Տ. Ներսէս քին. Թալուգճեան՝ Այնթապէն՝ ղրկած է մեզ։ Հոն հետաքրքիր եւ քրիստոնէայ ընթերցողը պիտի տեսնէ թէ աշխարհի ամենէն քաղաքակրթութեամբ ազգի մը մէջ ո՞րքան ակնածալից ըմբռնում մը կայ ամուսնական պարկեշտ կեանքին վրայ, որ հիմն է մեր գոյութեան եւ ընկերային բարոյականին։

ԵՒ ԵԼԻՑԻՆ ԵՐԿՈՔԵԱՆ Ի ՄԱՐՄԻՆ ՄԻ՝

Մարդկային սերունդին Աստուծոյ կողմէ արուած երկրաւոր յարաբերութեանց ամենասուրբն է ամուսնութիւնը։ Այս յարաբերութեան նշանակութիւնը «դաշնագրութիւն» կամ «համաձայնութիւն» բաներով չի բացատրուիր։ Ուրիշ բոլոր գործառնութեանց մէջ, երբ երկու անձեր իրարու հետ գործ մը ընեն, «պայմանագրութիւն» կամ «համաձայնութիւն» կը պատշաճի։ Եւ կրնայ ըլլալ որ այդ պայմանագրութեանց մէջ արուած խոստումը կատարելու համար անյաջողութիւն մը կենայ, եւ կամ իրաւախոհութեան բանաձեւերը այնպէս մը սահմանուին թէ իւրաքանչիւր պայմանագրող իրաւունք ունենայ դաշինքը խզելու։ Բոլոր համաձայ-

նութեանց մէջ, բացի ամուսնութենէ, կարգ մը անհատական իրաւունքներ կը վերապահուին, իսկ ամուսնութեան մէջ անհատական որոշ իրաւունքներ։ Կրթութեամբ, եւ որոշ յարաբերութեան հաստատութիւնը կայ, զոր միայն մահը կրնայ փոխել։ Այս իրողութիւնը ընդհանրապէս հասկցուած չէ, եւ այս պատճառով ամուսնին ցաւալի վիճակն է որ կը տիրէ աշխարհի մէջ։

Առաջին ամուսնական արարողութիւնը կատարած է նոյն ինքն Աստուած, մարդը արու եւ էգ ստեղծելով։ «Եւ օրհնեաց զինոսա. եւ անուանեաց զանուն նոցա Ագամ» (Ծննդ. Ե. 2)։ Այսօր ալ, դարձեալ, ամուսնական արարողութեանց միջոցաւ ըլլալին այս է։ Նախնական արարողութեան համեմատ երկու կողմին անունը նոյն է։ Աստուծոյ կողմէ հաստատուած օրէնքով մը, անոնք կ'ըլլան մէկ մարմին։ Առանկով թէ եւ ան երկու մասեր ունի, մին արու եւ միւսը էգ մաս, բայց միայն միացեալ մի անձէ։ Առանկով այլը ունի այժմ կին մը եւ կինը ունի այր մը։ Առաջին օրէն իսկ, երբ ամէն բարիքի եւ կատարեալ շնորհքի Տուրի կողմէն Ագամին առջեւ բերուեցաւ իր հարսը, Ագամճանչցաւ զայն, եւ իբր օգնական ընդունեց Աստուծոյ առջեւ։ Այն օրը անոնք կարգուեցան (Ծննդ. Ե. 2)։ Եւ Ագամ իմանալով այն բոլոր պատասխանատուութիւնները, որոնք կրնան իմացուիլ ասանկ պարագայի մը միջոցին, ըսաւ. «Այս այժմիկ ոսկը յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ» (Ծննդ. Բ. 23)։ Ան ըմբռնեց նաեւ թէ ապագային երբ մէկը կին մը արնէ, պիտի պարտաւորուի «թողուլ զհայր. եւ զմայր իւր»։ «Եւ եղիցին երկուքեան (այրը եւ անոր առած կինը) ի մարմին մի» (Ծննդ. Բ. 23. 24)։ Եւ անա «երկու որոշ մասեր որոնք առաջ զատ էին, այժմ անլուծանելի միութիւն մըն են», որուն իւրաքանչիւր կողմը կրնայ բաժնուիլ միւսէն մահուամբ միայն, եւ որչափ ասոն որ կ'ապրին, իրողութիւնը կը մնայ նոյն, երկուքը մի մարմին։ Դրականապէս աստուածային ոչ մէկ օրէնք կայ, որ թոյլատրէ բաժանումը

եւ արտօնէ էրկան կամ կնկան ուրիշի մը հետ միանալը. բաղադրութիւն է միայն մահուան պարագան. նոյն ամուսնացած անձի մը բաժանումը չնուրիշէն ճանչցուած է: Եւ ամուսնացած անձի մը հետ միանալ, որ ամուսնական ուխտը անարդել է, չնուրիշէն է: Այս, երկուքին մի ըլլալու իրողութիւնը, պարզ տեսական հաւատարմութիւնը, այլ յաւիտեանական օրէնքի մը հաստատութիւնը: Աստուած ամուսնութիւնը դրաւ իբր ընտանեկան մի սուրբ կապակցութիւն յարաբերութեան, զոր կատարելապէս վայելել անկարելի է որ եւ է մէկուն համար, եթէ իր կեանքը Անոր արդար օրէնքին ներգաճակօրէն չհամեմատուի:

Իրաւ. է որ, խոտախրտք ոմանք կամ խնդիրը աղէկ չըմբռնողներ երբեմն կ'արձակեն ու կ'արձակուին եւ դարձեալ կ'ամուսնանան: Քաղաքական օրէնքը կը թոյլատրէ զայս: Նոյն իսկ Մովսէս արանց եւ կանանց իրարմէ զատուելու եւ դարձեալ ամուսնանալու իրաւունքը տուաւ. սակայն Աստուծոյ կողմէն ասանկ թոյլտուութիւն մը երբեք եղած չէ: Փարիսեցիները Յիսուսի կը հարցնէին թէ, մարդու մը համար իր կինը թողուլ օրինաւոր է: Տիրոջ պատասխանը իր պատշաճեցումի մէջ այնքան հեռու կ'երթայ որ զանոնք կը յղէ Մովսէսի օրէնքին, որ աղահարզանը կը պատուիրէ: Յիսուս պատասխանեց թէ Մովսէս այդ հրամանը մարդոց խոտախրտութեան համար տուաւ: Այդ թոյլտուութիւնը Աստուծոյ կողմէն իր որդւոց համար չտրուեցաւ, եւ «ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս»:

Եթէ ամուսնական օրէնքի մասին չընտել. է 1-4էն զատ որեւէ ուրիշ աստուածաշնչական ծանօթութիւն չըլլար իսկ, հոն դրուած զորաւոր հաստատումը կը բաւէ որեւէ անկեղծ մարդ գոհացնելու: Առաջին համարին մէջ կը կարդանք թէ «Օրէնք տիրին մարդոյ որչափ ժամանակս կենդանի իցէ»: Հոն չըսուի թէ «որչափ ժամանակս առաքինի եւ բարի իցէ»: Հետեւաբար, ուշադիր ընթերցող մը կրնայ տեսնել թէ մարդ մը՝ մինչեւ մահ՝ ինքզինքը ազատ չի կրնար համարիլ

ամուսնական միութենէն, եւ երկու անձանց միջեւ պակով եղած միութիւնը որ եւ է կերպով չի կրնար խղուլ: Նոյն իսկ շնութեան պարագային, Աստուած անպարտ գանուղին կողմէ լրութիւն (integrity) կը պահանջէ: Տէրը կը հրամայէ թէ ով որ շնութեան մէջ գանուի թող արձակուի, բայց այն որ մեղաւորը արձակելու իրաւունքը չհաճ է, ուրիշի մը հետ ամուսնանալու արտօնութիւնը չունի: Այն հատուածը, որ պոռնկութիւն գործուած միջոցին անպարտ կողմին ուրիշի մը հետ ամուսնանալու իրաւունքը կուտայ, Մատթ. ԺԹ. 9 համարին մէջ է: Բայց այնպէս կ'ենթադրենք թէ հոն չկայ գետին մէկու մը համար որ անպարտ ըլլալու յոյսով կենայ հոն: (Մատթ. ԺԹ. 9 հմտ. Ե. 32) (*)

Ուրիշ ոմանք ապաւէն կը գտնեն Ա. Կորնթ. Է. 15 համարին մէջ: Այս հատուածը կը գործածուի արդարացնելու համար սխալ վարդապետութեանց ամէն տեսակները: Բայց եթէ քիչ մը քրիստոնէական լոյսով մը նայինք այն հատուածին վրայ, յայտնի պիտի տեսնենք թէ այն «Գերութիւնը» որ եւ է յարաբերութիւն չունի ամուսնական կապի հետ: Ուշադրութիւն ընել պէտք է որ, անհաւատքիւնն է որ կը բաժնէ կամ բաժանումի պատճառ կ'ըլլայ հոն: Բայց այն բաժանումին համար ենթադրուած պատճառը քրիստոնէական հաւատքի մասին է: Որովհետեւ հաւատացեալը կը պախարակուի անհաւատի կողմէն:

Եթէ ընտանիքի մը մէջ այս երկու տարրերը միասին կենան, մեծագոյն անպատեհութիւնք յառաջ կուգան. եւ Պօղոս կը ջանայ յորդորել հաւատացեալ հոգին, ուսուցանելով թէ քրիստոնեան ո'չ մեղքի տակ է, ո'չ մեղքի գերութեան մէջ է եւ ոչ ալ մեղքի պատճառն է, անհաւատի բաժնեկիւնն համար «Ապա եթէ

(*) Մատ. ԺԹ. 9 համարին մէջ բնագրական սխալ Թարգմանութիւն մը պիտի կենայ, որովհետեւ Fmph. Diaglottի Վատիկանի Թարգմ. մէջ Մատթ. ԺԹ. 9 համարը Մատթ. Ե. 32 հմր.ի հետ ուղիղ կը համեմատուի:

անհաւատն մեկնիցի, մեկնեացի — զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղբօրն կամ քեան յայնպիսի իրո» (Ա. Կորնթ. Է. 15): Պօղոս Առաքելի այս հատուածին մէջ խոսածը ամուսնալուծութիւն չի կրնար նշանակել երբեք, որովհետեւ նոյն գլխուն մէջ, շատ մը ուրիշ խնդիրներու վրայ խօսելէ ետքը, քրիստոնեայ արանց եւ կոնանց առնչութեան վրայ կը խօսի այսպէս. «Կին կապեալ է, ցորձան ժամանակս կենդանի է այր նորա, ուրա եթէ նշխիցէ այր նորա, ազատ է, ու մ կամեցի ամուսնանալ, բայց միայն Տերամբ:» (Ա. Կորնթ. Է. 39)

Այս խնդրոյն վրայ, ուստեաւաւնչական վարդապետութիւնը համառօտ կերպով կ'ամփոփենք այսպէս. —

Ա. «Ով որ իր կինը արձակէ եւ ուրիշ մը առնէ անոր դէմ շնութիւն կ'ընէ» Մարկ. Ժ. 11:

Բ. «Ով որ իր կինը արձակէ առանց պոռնկութեան պատճառի, ինք պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն»: Մատթ. ԺԺ. 9 (ըստ Emph. Diaglott) եւ Մատթ. Ե. 32:

Գ. Մէկը կրնայ արձակել միւսը պոռնկութեան պատճառով եւ չի մեղանչեր: Մատթ. Ե. 32:

Դ. Մէկը յանցաւոր եւ չնացող կը համարուի, պոռնկութիւն չեղած առին եթէ արձակէ ընկեր մը: Մատթ. Ե. 32:

Ե. Առաջին ընկերոջ կենդանի եղած պահուն ուրիշին հետ ամուսնանալ շնութիւն ընել է: Մարկ. Ժ. 11:

Զ. Թէ՛ այր եւ թէ՛ կին յանցաւոր է եւ չնացող, ամուսնական ուխտին անհաւատարմութիւն եղած պահուն: Մարկ Ժ. 11. 12:

Է. Ո՛չ պոռնկութիւնը եւ ոչ շնութիւնը կ'աւերէ ամուսնական միութիւնը, ոչ ալ հրաման կուտայ դարձեալ ամուսնանալու: Հռովմ. Է. 1-3: Ա. Կորնթ. Է. 39:

Ոչ մէկ ճշմարտութիւն կրնայ ասկից աւելի պայծառ կերպով արտայայտուիլ, եւ կեանքի մէջ ոչ մէկ յարաբերութիւն ասկից աւելի կարեւոր է, եւ մենք կը փափաքինք ընթանալ, որ եւ է գնով, Աստուծոյ Բանին լոյսովը: Եթէ ուզենք

կեանքը ապրիլ՝ մեղքը պէտք է որ խոստովանուի ու ներուի. բայց հանդէպ Աստուծոյ եւ մարդո՛ւ անմեղ յարաբերութեան մէջ եւ սրբութեան մէջ. արդարութեան եւ կեանքի ուրախութիւնը, խնդրալուծութեան է որ եւ է մէկը ներելու համար բոլորը, եւ Աստուծոյ փառքին գերազանցութեան համար կորսուած մը համարելու է զայն:

Քաղեց ՆԵՐՍԷՍ ՔԶ. ԹԱՎՈՒԳՃԵԱՆ (The Platform and voice)

(Ամսաթերթեմ)

ՏԻՊԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

(Հ. Բ. Բ. Մ. ուրամսնայ տեղեկագրիմ ապրի)

Մեր խմբագրական գրասենտիւնին վրայ զիջուած առաւել կամ նուազ կարեւոր հատորներուն մէջ ուշագրաւ տեղ մը կը բռնէ մօտ երկու հոդուիւր ընդարձակ էջերէ բաղկացեալ ուսուար Տեղեկագիրը, զոր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հրատարակեց իր զոյութեան հինգերորդ շրջանին վրայ (1 Մայիս—31 Դեկտ. 1910): Ազգային կեանքի յուսանատեցնող ամուլթեան շրջանի մը մէջ, միութեամբական, յուսադրող երեւոյթներ են միայն ազգին կրթական եւ բարեսիրական Մարմինները, զլիաւորապէս Հ. Բ. Ը. Միութիւնը, Միացեալը, Ազգանուէրը, Դպրոցասիրացը, որոնք արդիւնաւոր լուսթեան մը մէջ ազգին ապագային ամուր հիմերը դնելու կ'աշխատին:

Առոնց մէջ, իր ծրագրին բաղմակողմանի եւ լուրջ հանգամանքովը, եւ զործունէութեան ընդարձակ շրջանակովը առաջինը կը հանդիսանայ Բարեգործականը, որ ազգին ընդհանրութեան կողմէ՛ գրած ամենաջերմ ընդունելութեան շնորհիւ կարող կ'ըլլայ ոչ միայն ինքը ուղղակի նպատակ ուղքատութեան եւ խաւար ազդարարութեան մէջ տուայտող Հայաստանցիներուն վիճակի ամօքման, այլեւ կ'օժանդակէ նաեւ Միացեալին ալ, Ազգանուէրին ալ, Դպրոցասիրացին ալ, եւ ու-

ընչ այն ամէն մարմիններուն որոնք, իր նպատակին համաձայն, օգտակար գործունէութեան համեստ սահման մը գծած են իրենց Այս կերպով Հ. Բ. Ը. Մ.ը հակառակ իր տակաւին հազիւ վեցամեայ դուրսեան (հիմնուած 1906ին), կը հանդիսանայ հաստարմատ բունը, որմէ կը ճիւղաւորուին, կը ծլարձակուին, ճշմարիտ եւ զիտակից բարեգործութեան սերմերը՝ հիւթեզ, անդաբար պտուղներ հասցնելով:

Թղթատելով տեղեկագրի ստուար էջերը, հոգեկան հաճոյք մը եւ սրտապնդում մը կը զգայ մարդ, ի տես արդէն իսկ ձեռք բերուած գեղեցիկ արդիւնքներուն: Այդ ութամեայ բարեգործութեան կարճ շրջանին մէջ մասնաճիւղերուն եւ գործոն անդամներուն թիւը, — որով Միութեան սովորական եկամուտներուն գումարը — կըրկնապատկուած է, եւ հիմնական զրամաղլուխին վրայ աւելի քան 5000 եղիպտոսի յաւելում մը եղած է, հասնելով 15,109 եղիպտոս. ոսկիի կլորիկ գումարին, իսկ մասնաւոր զրամաղլուխին վրայ յաւելում եղած է 1481 եղիպտոս. ոսկիի: Այս բարգաւաճ վիճակը, որ եւս քան զեւսկ'ամրապնդէ հանրային հաւատքը՝ Միութեան ապագային վրայ, չնորհաւորելի եւ եւ ջերմ չնորհակալութեան արժանի է, անով մանաւանդ որ միեւնոյն ութամեայ շրջանին մէջ կարելի եղած է 1795 եղիպտոսական ոսկիի նպաստ մը հասցնել գաւառային ամէնէն հեռուոր, մութ եւ անձանօթ անկիւնները, անոր մեծագոյն մասը՝ 1150 ոսկի՝ յատկացնելով կրթական գործին, 167 ոսկի կարօտեալներու եւ 411 ոսկի կարօտ հողագործներու, աշխատաւորներու, անողջապահութեան եւն: Չի մոռնա՞նք յիշել որ Միութեան հիմնարկութենէն մինչեւ ե. շրջանի վերջը բրած նպաստներու քանակութիւնը կը հասնի 16106 եղիպտոս. ոսկի պատկանելի գումարին:

Այս քան փայլուն եւ ճշմարտապէս բարերար գործունէութիւն մը, բնական է որ իր շուրջը պիտի բոլորէ՝ աշխարհի ամէն կողմերէն համակրողներու ստուար խումբ մը, որոնք իրենց առաւել կամ

նուազ կարեւոր նուիրատուութիւններով պիտի նպաստէին սկսուած ազնիւ գործին: Տեղեկագրին մէջ մանրամասնաբար կը յիշատակուին կազմուած նորանոր մասնաճիւղերը՝ իրենց ձեռք բերած շօշափելի արդիւնքներով, նաեւ այն զանազան կրթականները եւ կարեւոր նուիրատուութիւնները որոնք արդէն ժամանակին ծանուցուած են, եւ որոնց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի են Վ. Բ. Ը. Մ. Տիգրան Խան Քէլէկեանի երկու անդամէն ըրած 37,500 Քր. ի իշխանական նուիրատուութիւնը՝ Չոք-Մարզուանի մէջ կառուցանելի որբանոցի շէնքը ի զուլս հանելու համար, նաեւ Տիար Սեդրաք Դաւիթեանի 802 եղիպտոս. ոսկի արժողութեամբ նուիրած հողերն եւ արժեթուղթերը, Մարքիւղուհի Բոպէրգո Վէնդուրի Ճէնօրիի (Ծն. Տիգրան Իսաա տ'Ապրո) 400 Անգլ. ոսկի մուտքը, եւ 1200 Քր. տարեվճարի նուիրատուութիւնը, ծանօթ գրագէտ Տիար Մեսրոպ Նուպարիանի կտակած խանութը՝ 500 ոսկի արժողութեամբ, Չոք-Մարզուանի երեւելիներէն Տիար Պետրոս Բէլթէկեանի նուիրած 20 աէճիւմ հողը 80 ոսկի արժողութեամբ՝ որ առնթրեակից է Քէլէկեան որբանոցի համար գնուած հողերուն, եւն. եւն.:

Այս կարգի նուիրատուութեանց շնորհիւ Հ. Բ. Ը. Մ.ը կարող կ'ըլլայ Չոք-Մարզուանի մէջ տիպար որբանոցի մը շինութեան ձեռնարկել, եւ այժմէն իսկ 60ի չափ որբեր խնամել Չոք-Մարզուանի եւ Հասան-Պէյլիի ազգ. որբանոցներուն մէջ, անցեալ շրջանին մէջ Որբախնամ յանձնաժողովին վճարելով իբր 100 օսմ. ոսկիի գումար մը: Նաեւ ի վիճակի կը գտնուի քսան փոքրիկ նախակրթարաններ բանալ գիւղային հեռաւոր անկիւններու մէջ, վարժապետանոցի մը բացումը ապահովել վաճառ մէջ, եւն.:

Եւ ամենէն ուրախալին այն է որ կրթական ճիւղին մէջ Հ. Բ. Ը. Մ.ը իրեն զօրաւոր եւ գիտակից աջակից մը գտած է յանձին Հայոց Միացեալ Ընկերութեանց, որ ստանձնած է արդէն իսկ բացուած նախակրթարաններուն տեսչութիւնը, նա-

եւ Վանայ վարժապետանոցին վարչութիւնը, եւ խոստացած է Չոք-Մարզուանի մէջ բացուելիք որբանոցի հոգն ալ ստանձնել։ Ազդին երկու կարեւորագոյն ընկերութեանց այս սիրալիր դործակութիւնը ուրախալի երեւոյթ մըն է մեր մէջ, փայլուն հակադրութիւն մը ուրիշ կարգ մը Կալմակերպութեանց, որոնք մէկզմէկ վարկարկելով, եւ հաւաքաբար՝ Բարեգործականին եւ Միացեալին ուղղակի թէ անուղղակի հարուածներ տալով կը կարծեն յառաջ ասնիլ իրենց Կալմակերպութիւնները։

Բայց հակառակ այդ կարգի անուղիղ յարձակումներու, Հ. Բ. Ը. Մ.ը եւս քան զեւս կը բարգաւաճի։ Ե. չըջանին վերջը, իր 61 մասնաճիւղերով՝ դործոն անդամներուն թիւը հասած էր 3947ի, եւ վստահ ենք թէ ներկայ 1911 տարեկշտնին վերջը այդ թիւին վրայ հազարաւոր նոր անդամներ աւելցած պիտի ըլլան։

Ալիանս-Իզրայէլիդը, իր հիմնարկութեան առաջին տարիներուն մէջ, այսինքն իր առաջին վարժարանին բացումէն հինգ տարի ետքը, 1866ին, երեք վարժարան միայն ունէր, 1868ին՝ 7, 1872ին՝ 17, եւ 1877ին՝ այսինքն ճասնըհրեզ տարի ետք 30 վարժարան։ Իսկ Հ. Բ. Ը. Մ.ը իր հիմնարկութենէն հինգ տարի վերջը բացած է արդէն 20 վարժարաններ, վարժապետանոց մը, կը հիմնէ արպար որբանոց մը, եւ ծրագրին մէջ ունի ուրիշ վարժարաններու բացումը՝ Թօգատի մէջ եւ այլուր։ Փայլուն յաջողութիւն մը, որուն համար Ազդային մամուլը, եւ ազդին օգուտին ճշմարտիւ գիտակից մեծամասնութիւն մը անկեղծ երախտագիտութիւն մը ունին Միութեան պատուական հիմնադրաց, բարերար եւ պատուոյ անդամներուն, Կեդր. Վարչական Ժողովոյ, եւ բոլոր մասնաճիւղերու անգամայն եւ առհասարակ այս ազնիւ եւ իրապէս օգտակար դործին աշխատողներուն համար։

Այս տողերը մամուլոյ յանձնուելու վրայ էին, երբ մեր աչքին հանդիպեցաւ Կոնստանտին 13 Կիրակիի թիւին մէջ տարօրինակ

հակ խմբագրական մը, «Զգուշացե՛ք» խորագրով։ Ի՞նչ բանէ զգուշանալ, Առաւուս՝ իմ. արդեօք անաւոր նար վրանդ մը կը օգտուայ այս տառագիւղ, տագնապեալ ազգին գլխուն։

Կարգացինք ու վատեցանք։

Կարգացինք ու արգահատեցանք։

Կարգացինք աւ նոզկացի՞նք։

Տեսանք թէ այն «ահա որ վտանդը», որմէ պէտք է զգուշանայ, Հ. Բ. Ը. Մ.ն է, որուն վարիչները «գառնազգես գայեր» կը հռչակուին, որոնք կը ջանան «սիւղէմաթիք աշխատանքով մթաղնել աշխատաւոր ժողովուրդին զատկարգային գիտակցութիւնը»։

Մտածելու ի՞նչ տարօրինակ եղանակ, ի՞նչ դատողութիւն։ Մինչ Բարեգործականը ամեն ժամանակ եւ ամէն առթիւ բարձրաձայն կը հռչակէ թէ «Միութիւնը կ'աշխատի միայն եւ միայն Հայութեան ճեշտակուն, մտաւորական եւ բարոյական բարօրութեան՝ քաղաքական ունե գործունեութեան անկախ կերպով», թէ «այդ ձեռնարկին ջանքն եղած է իր շուրջ հաւաքելու ամէն զատկարգի եւ ամէն կուսակցութեան պատկանող Հայերը, առանց զանաանքի եւ կարծիքի տարբերութեան», թէ «Միութիւնը կուսակցական դործերէ բոլորովին ձեռնադահ կը մնայ եւ ազգային-քաղաքական պայքարներու երբէք չի մասնակցիր», ի՞նչ խիղճ, ո՞ր աստիճան կուսակցական անձկամտութիւն պէտք է ունենայ մարդ, «քունալից ետքիւն» մը վերադրելու համար Բարեգործականին, եւ «թէ՛ տեսական եւ թէ՛ օրինական հիմունքներով արդիւնաւոր իր լիկերները (Մ. Դ. Հնչակեանները) անոր մասնակցել(1)։

«Զգուշացե՛ք, ընկերներ, կը պոռայ Պ. Խմբագիրը, զգուշացէք մեր երգուեալ հակառակորդներուն ձեռքը զէնք դնելէ եւ զանոնք մեր իսկ բազկով զօրացնելէ»։ Եւ կը հրաւիրէ «բոլոր անոնք որ անգամակցած են Բարեգործականին — Եգիպտոսի փաշաներուն այդ հակայեղափոխա-

(1) Կոնստանտին 13-ից ետեւ զգած է, տեսնելով որ Բարեգործականին անդամակցողներու ցուցակին մէջ կ'երեւան Մ. Դ. Հնչակեան ընկերներ ալ... Ի՞նչ ոճիւր, ի՞նչ սրբապգծութիւն Աստուած իմ։

կան դաւակցութեան — իսկոյն հրաժարել
անկէ(1)»:

Մենք այս անհետկեթ արդելքը կար-
գանով, թրան է որ սրտի անհուն վիշտ մը
չգաղթնք այս աստիճան անհկամութիւն
տեսնելով ինքզինքնին ազատամիտ հոչա-
կող դասակարգ մը մաղող քով . այսու-
հանդերձ միտթարական եւ սրտապնդող
բան մըն ալ գտանք ստոր մէջ. եւ այդ
սա պարագան է որ Հայ ժողովուրդը, նոյն
իսկ կուսակցական շարքերու մէջ մանուշ-
ները, սկսած են այլեւս դիտակցել իրենց
ճշմարիտ օգուտին, անդրադառնալ թէ ըն-
կերվարական — լաւագոյն պիտի բլլար
ըսել . . . ամբողջութեան — ցնորքնե-
րու մէջ չէ իրենց փրկութիւնը, թէ ճշ-
մարիտ յառաջդիմութիւնը, նոյն իսկ ժո-
ղովրդային, աշխատաւոր դասակարգի նիւ-
թական վիճակի բարոյութեամբ՝ դասակար-
գային անդոյ խնդիրներ ստեղծելով, մա-
նաւանդ թէ կռիւի, պայքարի ուղղու-
թիւնը բռնելով չէ՝ որ ձեռք կը բերուի
անպատճառ. այլ ստոր հասնելու լաւա-
դոյն միջոցն է ժողովուրդին զարգացումը՝
որ ինքնագիտակցութիւնը յառաջ պիտի
բերէ անխուսափելիօրէն, ընչազուրկ աշ-
խատաւոր դասակարգին ապրուստի պատ-
ուաւոր միջոցներ հայթայթելը, ազգին
որբերը՝ սոսկալայ Հայութեան ամէնէն յու-
սալից մէկ մասը՝ պատուարելը եւ տիպար
կրթութեամբ մը օժտելը:

Ահա՛ այս բարերար դործը կը կատարէ
Հ. Բ. Ը. Մ. ր երկրին ամէն կողմերը, ա-
մէնէն յիշուած, մոռցուած, հեռաւոր ան-
կիւններու մէջ իսկ:

Եւ ամբողջ աշխարհի մէջ սփռուած

(1) Եւ այս հրաւերը կ'ըլլայ այնպիսի Միու-
թեան մը գէտ, որ իր ներկայ տեղեկագրին մէջ
տպուած Ա. շրջաբերականով բացայայտելն կը
հուշակէ Թէ օրինք բացարձակապէս ձեռնպահ մնալով
հանդերձ կուսակցական եւ անձնական բոլոր խըն-
դիրներէ եւ խտիրներէ, սակայն չի կրնար արգի-
լել իր վարկէներն եւ անդամները, իբրեւ ազատ
քաղաքացի, Միութեան շրջանակէն դուրս յարելէ
այս կամ այն գաղափարին կամ վարդապետութեան,
անշուշտ անոր ընդհանուր չանկուն չփնտելու
պայմանաւ: Ողջամիտ ընթերցողին կը մնայ դատել
Թէ ո՞ր կողմն է ազատամտութիւնը, Բարեգործակա-
նին Թէ իր յամառ հակաակիրդներուն քով:

Հայութիւնը հետզհետէ աւելի անգամ, ան-
մաւր կապերով կը միանայ անոր:

Անիկա միտթարական է. ասիկա չափ
սրտապնդող երեւոյթ մըն է, եւ մենք եւ-
րախտապարտ ենք նոյն Միութեան հիմ-
նադիրներուն, որ ասիթ եզան Հայ ժողո-
վրդեան բնածին ողջմտութեան արթնա-
լուին:

Հայ ժողովրդեան բոլոր պաշտօնական
վարիչները, առաջնորդ, վարդապետ, քո-
հանայ, ուսուցիչ, մատուրական, եւ բոլոր
անոնք որ ազդեցիկ ձայն մը ունին ժողո-
վրդեան մէջ, պէտք է աշխատին այս մտա-
ւոր արթնութեան աւելի զարկ տալ, ջա-
նալ անոր առաւել եւս ծաւալման:

Հո՛ղ է մեր փրկութիւնը:

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ՆԱԽԱԼ ԳԱՆՔԵԾԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

Ա. յն օրից երբ Հայ ժողովուրդի կրօ-
նական Պետին՝ Ամենայն Հայոց Հայրա-
պետ Տ. Տ. Մատթէոս Բ. ի վաղաժամ եւ
սգալի մահով թափուր մնաց Ս. Լուսա-
ւորչի Աթոռը, հէնց այն օրից Հայ լրա-
գրութիւնը իւր էջերում հիւրընկալեց
զանազան թղթակցութիւններ այս ու այն
բարձրադասական եկեղեցականաց մասին,
որոնք թեկնածու էին համարվում Ս. Լու-
սաւորչի Գահին:

Հայ ժողովուրդը այն աստիճան բարո-
յական սնանկութեան չէր հանդիպել քան
այժմ: Չկայ մէկը, որ իւր վրայ բեւեռէր
համայն ժողովուրդի սէր, համակրանք եւ
մեծ ժողովրդական յարգանք, ինչ որ Հա-
յոց Հայրիկ եւ Իզմիրլեան հոգելոյս Հայ-
րապետաց ժամանակ:

Ա. յն օր երբ համազգային պատգամա-
ւորները հոգելոյս Իզմիրլեանի մարմինը
հողին յանձնեցին, հէնց այն օրից մամուլը
խօսեց Օրմանեան, Դուրեան, Սուրէնեան,
Պարզեան եւ Կարապետ եպիսկոպոսների
մասին: Քննադատելն նոցա լաւ ու վատ

կողմերը, եւ վերջապէս մինչեւ այսօր, որ ընտրութեան հաղիւ երկու ամիս է մնացել, տակաւին զրականապէս եւ ոչ մէկի վրայ կանգ չեն առել, որպէս արժանաւոր փոխանորդ Ս. Լուսաւորչի Գահին, որին կարողանային ամենայն վստահութեամբ յանձնել Հայ ժողովրդի բարոյական եւ կրօնական ղեկը:

Վերեւ յիշուած Սրբազաններին եւ ոչ մէկին ի մօտոյ ծանօթ չլինելով, չեմ կարող ոչ մի լաւ կամ վատ բան ասել, բացի Կարապետ Եպիսկոպոս Տէր Մկրտիչեանը, որին ի մօտոյ ծանօթ եմ, ծանօթ նրա անձնաւորութեան եւ գործունէութեան 1907 թ.ից, որ նա որպէս թեմակալ առաջնորդ Ատրպատական եկաւ եւ շարունակում է իւր արդիւնաւէտ գործունէութիւնը մինչ այժմ:

Կարապետ Սրբազան որպէս մարդ. — Եթէ ո եւ է մէկ այն մտորժանցից որ շատ անգամ քննադատել են Կարապետ Սին, նոքա գոնէ իրանց կեանքի մէջ մի անգամ ի մօտոյ տեսած եւ ծանօթ լինելին նրա անձնաւորութեան հետ, եւ վստահ եմ որ նոքա այլ կերպ կը ներկայացնէին, քան ինչ որ լսել են հոռուց հեռուն, առանց տեսնելու եւ ճանաչելու Կարապետ Ս.ը որպէս մարդ՝ բոսի ամենալաւն իմաստով՝ շատ լաւ մարդ է. բարի, առաքինի, կրթած, հեզ, խոնարհ, եւ վերջապէս այն բոլոր բարեմասնութիւններ որ անպայման ունենալու է մարդը, այդ բոլորը ունի Կարապետ Սրբազանը: Այս մասին կը վրկայեն այն բոլոր մարդիկ որոնք ի մօտոյ ծանօթ են Սրբազան Հօր:

Կարապետ Ս. որպէս հոգեւորական. — Նա եղել է մի այնպիսի եկեղեցական, որ եթէ այսօր Հայ հոգեւորականների մէջ 3-4 ոչ քի ընկնող կայ, եւ ամենայն բարեխղճութեամբ կ'ասեմ որ Կարապետ Ս.ը նոցանից մինն է, նա փայլում է իւր բարձր եւ զանազան լեզուագիտութեամբ: Եւ այդ առսայ 1910 թ.ին, երբ իր թեմական այցելութեանց ժամանակին Ուրմի եկաւ, Ուրմին ուր քսան տեսակ դաւանանք կայ եւ իւրաքանչիւր կրօնի ներկայացուցիչներ, կրթված եւ բարձր գիտու-

թեամբ օժտուած մարդիկ են: Կարապետ Ս.ի ներկայութիւնը բարձրացրեց Հայ հոգեւորականութեան ընկած դիրքը: Տեսնված չէր որ Ուրմի եկող առաջնորդ իւրաքանչիւր ազգի ներկայացուցիչ հետ խօսի շատ ազատ, եւ կարողանայ իր միտքը արտայայտել շատ պարզ եւ նոյա հասկնալի լեզուով: Նա բոլոր այլադաւան կրօնապետների հետ այնպէս վերաբերեց որ նոքա խոստովանում էին թէ «խսկական հոգեւորականն է» Կարապետ Ս.ը գիտակցութեամբ հոգեւորական է եղել, եւ նրա միակ ձգտումն է եղել Հայ եկեղեցւոյ պայծառութիւն եւ բարեկարգութիւն որ մենք ականատես ենք եղել, հոգեւորականի կատարելոյ տիրար է, հեզ, ոգորմած, անյիշատակ, բարի եւ առաքինի վարուց տէր:

Կարապետ Սրբազան գործունէայ. — Այն օրւանից երբ նա ոտք է դրել Ատրպատականը, նրա միակ նպատակն է եղել իւր ամբողջ հոգով աշխատել որպէս զի դպրոցական ցանցերով պատէ Ատրպատականի բոլոր գաւառները: Այդ նա ցոյց տուց Ուրմիում: Քիչ ժամանակից նա կարողացաւ Ուրմիի շրջանում գրթել բոլոր գիւղերում (բացառութեամբ մի քանի 10-15 անվոր գիւղերից) դպրոցներ բաց անել հէնց իրանց տեղացիների օժանդակութեամբ: Ո՞վ կարող է ուրանալ, որ Թաւրիզի թեմական կենդրոնական դպրոցի լայնամը Կարապետ Ս.ի ջանքերով է, նոյնպէս ո՞վ կարող է ժխտել, որ Թաւրիզի Արամեան դպրոցի Պարսից կառավարութիւնից ստացած 200 թում. նպաստը, որ երկար տարիներից ի վեր դադարել էր, այժմ ստացվում է: Նորից կրկնում եմ. ո՞վ կարող է ուրանալ Արամեան դպրոցի Ռուսաց կառավարութիւնից ստացած նպաստը, որ կրկին երկար տարիներից ի վեր դադարել էր. այժմ նա եւս ստացվում է: Նա դործել է եւ արել է շատ բան, մասնաւորապէս Պարսկաստանի այս սազնապալից եւ խիստ աննպաստ պայմաններում: Եթէ Ատրպատականցիներ այս բոլորի հանդէպ լռեն, հաւատացէք որ քարեր պիտի վկայեն այս բոլորի համար: Եթէ թւենք Սրբազանի

գործունէութիւնը, շատ-շատ է. թողնենք տակաւին այն մասեր ու մուկեր զորքեր ու բով չեմ ուզում Տաճարի յարգոյ բնթեր-ցողներին ձանձրոյթ պատճառել: Թաւրիզի սովին, որ մարդիկ քաղց ու սովամահ էին լինում, ո՞վ Բագրից մաքարկանութեամբ 3-400 թուաման փող բերեց Թաւրիզի «Աղ-քատախնամ» ընկերութեան, նոյնպէս Թէհ-րանից եւ ուրիշ զանազան քաղաքներից: Ամենից չուտ Թաւրիզիք պէտք է շտա-պէին դրելու, այն ղէպքում՝ երբ զանա-զան բախտախնդիր մարդիկ թերթերի մէջ հրապարակով Սրտազանին նկարագրում էին որպէս թոյլ, աննշողնակ, դանդաղ եւայլն: Եթէ իրօք թոյլ էր, ո՞վ կորգա-դրեց Ս. Ստեփաննոս Նախավկայի կալաւ-ծական խնդիրը՝ Ռուսահպատակ Մանա-գովի հետ, եւ Ռուսոյ հիւպատոսարանում ի նպաստ վանքի վճռեց:

Այս բոլորից վերջ, մեր կարծիքով ամենաարժանի ընտրելին է Հայրապետու-կան Գահին՝ Կարապետ Սրբազան, որպէս զիտնական, գործունեայ, լեզուագէտ, որ միայն կարող է բարարութիւն տալ Հայ ժողովրդի բազմառեսակ եւ ծով կա-րիքներին:

ԱԿԱՆԱՏԵԱ

Թաւրիզ, 18 Հոկտ. 1911

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԳՈՐԾԵՐ

Ամերիկացիներ, ինչպէս զրաւ ենք, հրաւիրուած են մասնակցելու Կաթոլ-յառաջիկայ ընտրութեան, զրկելով մէկ եկեղց. եւ մէկ աշխարհական պատգամա-ւոր: Տ. Պողոս Վ. Գաֆթանեան, Դեկտ. 1 սկիզբը ճամբայ կ'ելլէ Էջմիածին երթա-լու համար իրր առաջն. աեղապահ, իսկ աշխ. պատգամաւորի ընտրութեան կերպը դեռ որոշ չէ: Մէկ կողմէ Գաֆթանեան Վ. ծանուցիր է բոլոր թեմակալ հովուոյց, որ Մայր Աթոռէն զրկուած «Այլա. պատ-գամաւորի ընտրութեան կանոններու» համաձայն Հայ Եկեղեցւոյ բոլոր հարա-զատ զաւակները անխտիր Նոյ. 12ի Կի-րակին (Ը. Ն.) ընդհ. ժողովի հրաւիրին՝ ընտրել տալու թեմական ներկայացուցիչ-ները, որոնք ի վերջոյ Նիւ-Եօրքի ուսա

հիւպատոսին հաւանութեամբ եւ ներկա-յութեամբ պիտի ընտրեն պատգամաւորը: Գաֆթանեան Վ. կ'աւելցնէ թէ «Առանց թեմական հովիւներու կամ առաջնորդա-րանի ներկայացուցչին նախագահութեան գումարուած ժողովները կամ կատարուած ընտրութիւնները անվաւեր են»: Միւս կողմէ Ամերիկահայոց Երեսփ. Ժողովոյ զիտն. Սգգի մէջ հրատարակուած նամա-կով մը կ'ըսէ թէ Գաֆթանեան Վ. լոկ Երեսփ. Ժողովոյ Դիւանին ջանքերուն չնորհիւ ձեռք բերուած իրաւունքը կապ-տել կ'ուզէ, Կովկասի շրջանակին համար միայն պատրաստուած ընտրական կանո-նադիրը պատշաճեցնելով Ամերիկահայոց, որոնք ունին իրենց Երեսփ. Ժողովը, ու բուն միայն կը պատկանի պատգամաւորի ընտրութեան իրաւունքը: Նամակը կը վերադրէ Գաֆթանեան Վ.ին այնպիսի ձեռնարկներ, որոնք «խախտելով Ամերի-կահայ Սահմանադրութեան որոշ տրամա-դրութիւնները, պատճառ պիտի զանա-նոր այլքան դժուարութեամբ ստացուած իրաւունք մը անգործադրելի մնայ»: Այս խնդրոյն կարգադրութեան համար արտակարգ երեսփ. ժողով մը պիտի գու-մարուէր: Չգիտենք թէ Ամերիկահայ թերթերու ծանուցած այս վէճը ի՞նչ կը բունեցած է այսօր:

Ամէն պարագայի մէջ շատ ցաւալի է որ անձնական-տիրացուական վէճ մը կը վտանգէ այնքան զգուարութեամբ ձեռք բերուած իրաւունք մը՝ Կաթոլ. ընտրու-թեան մասնակցելու գերազանցօրէն կարե-ւոր խնդրոյն մէջ:

«Երանի թէ, կը զրէ Կոչնակ, մէկ քանի արժանաւոր թեկնածուներ ժողո-վրդեան առջեւ դալին իրրեւ ընտրելիներ, եւ ժողովրդական լուրջ քուէտրկութեամբ ընտրուէր անձ մը, որ Եկեղեցիին շահե-րուն առջեւ զոհելով ամենէն կուսակցա-կան նկատողութիւն, երթայ եւ իր քուէն տայ այն անձին որ ամենէն արժանաւորն է Հայաստանեայց Ս. Եկեղեցիին Հայրա-պետն ըլլալու: Ամերիկայի Հայոց երես-փոխանական մարմինը — ոմանք կը կար-ծեն — կարող է նախքան մը կարգել»:

Ամերիկայի Հայոց առաջնորդութեան խնդիրը, որ ժամանակէ մը ի վեր կը սպանոնար Ուսղըրի Հայոց Եկեղեցիին ներքին խաղաղութիւնը վրդովել, եւ Արժ. Տ. Մատթէոս քհն. Մանիկեանի հովուական ծառայութեան արգելք հանդիսանալ, փոխադարձ հասկողութեամբ եւ համեմատելի ոգիով քննութեան ենթարկուած է, եւ երկուստեք որոշուած է կատարելով խաղաղութիւն վերահաստատել, եւ սպասել որ Էջմիածին իր վճիռը տայ Տ. Մուշեղ Եպ. պաշտօնական գիրքին ու յարաբերութեան նկատմամբ: Զրոյց կայ թէ Տ. Մուշեղ Եպ. եւ իր կուսակիցները Էջմիածին պիտի դիմեն, եւ եկեղեցական օրինական քայլեր առնեն, Մուշեղ Եպ.ը Ամերիկայի Հայոց իբր առաջնորդ հաստատելու:

(Կոչնակ)

ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿԱՅՈՂԱԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԵՒ ԸՆՏՐԵԼԻՆԵՐՈՒ ՇՈՒՐՁԸ

Կաթող. ընտրութեան օրերը քանի՜ կը մօտենան, այնքան աւելի չափազանցութեամբ կը հետեւի Հայ մամուլը այդ ընտրութեան խնդրով, եւ թեր ու գէ՛մ կարծիքները՝ ընտրութեան եզանակին եւ ընտրելիներու անձին եւ հանգամանքին վրայ՝ իրար կը բաղխին առաւել ուժգնութեամբ: Շարժումս ստացուած Ռուսահայ թերթերը հակընդդէմ ակտիւսիւններ կը պարզեն Ռուսիոյ Ներքին գործոց նախարարութեան այն որոշման մասին, թէ պատգամաւորները պէտք է ընտրուին իւրաքանչիւր թեմի բնակիչներէն, եւ թէ հետեւաբար թեմէն դուրս գտնուող մէկը չի կրնար պատգամաւոր ըլլալ: Մշակ կը պնդէ թէ թեմէն դուրս պատգամաւոր ընտրելու զրուածներ, թէեւ ասկէ առաջ ընդունուած, բայց երբեք այսքան ծաւալ չէր գտած: Խրիմեանի ընտրութեան ժամանակ թեմերէ ընտրուած պատգամաւորներ, աւելնէն ալ անդադրեցին ինչ Միայն Եգիպտոսի եւ Պրուսայի թեմերը դուրսէն պատգամաւոր ընտրած էին:

Իզմիրլեանի ընտրութեան ժամանակ ալ պատգամաւորներու մեծ մասը տեղացիներէ ընտրուած էր: Իսկ այս անգամ դուրսէն պատգամաւոր ընտրելու սխալներ ոչ միայն լայն ծաւալ ստացաւ, այլեւ այնպիսի բնասարտութիւն որ միանգամայն հակաժողովրդական է: «Դրսեցիներու մեծամասնութիւնը ընտրեց Պատրիարքարանից, եւ այդ ապօրէն ու հակաժողովրդական վարմունքը հաւանութիւն գտաւ եւ Խառն ժողովի կողմից» Պ. Հ. Առաքելեան շեշտելէ ետք թէ «կառավարութեան միջամտութիւնը զալիս է վերջ տալու Կ. Պոլսի Պատրիարքարանին եւ Խառն ժողովի այդ ապօրինի ընթացքին», որու նախաձեռնութիւնը կը վերադրէ Էջմիածնի այժմեան վարիչներուն, կ'եղբակացնէ. «Միակ ելքը դուրս գալու ներկայ դրութիւնից, այն է որ Սինօղը միջնորդէ (Ռուս) կայսերական կառավարութեան առաջ՝ թոյլ տալ մասնակցելու ընտրութեանն այն պատգամաւորներին, որոնք ընտրված են ինքնաբերաբար եւ անմիջապէս Թիւրքահայ թեմերի կողմից, իրանց պատշաճաւոր ժողովներէ ձեռքով, իսկ նշանակովի պատգամաւորներին մերժել»:

Իսկ Հոռիզոն փափաքելի նկատելով հանդերձ որ իւրաքանչիւր թեմ իր մէջէն ընտրէ իր պատգամաւորը, քանի որ «ժողովրդի ձայնը ներկայացնել կարող է միմիայն նա՝ որ ապրում է այդ ժողովրդի շրջանում եւ ծանօթ է նրա պահանջներին ու ցանկութիւններին», այսուհանդերձ կը պնդէ թէ «երբ թեմի մը ժողովուրդ իր շրջանին մէջ յարմար անձնաւորութիւն չգտնելով կամ մի քանի հարիւրների հասնող ճանապարհածախքը չկարողանալով վճարել, ներկայացուցիչ կ'ընտրէ Էջմիածնի մօտ գտնուող ուրիշ թեմէ մը, պէտք չէ զայն գրկել իր ձայնէն: Այս մտքով Էջմիածնի Սինօղն արդէն դիմած է Կովկասի Փոխարքային, որ ներքին գործերու նախարարութեան հետ համաձայնութեան գալով, կաթողիկոսի ընտրութիւնը թողնեն անփոփոխ, առանց սահմանափակելու, նախկին ձեւով»:

Նոյն թերթը (Հորիզոն) կը պաշտպանէ կաթողիկոսին ընտրութիւնը ոչ թէ գաղտնի այլ բայարձակ քուէարկութեամբ կատարելու գաղափարը: Իր հայեցակէտը այն է որ թեմականները երբ որոշ ընտրելի մը կը ցուցնեն, պէտք է վստահ ըլլան թէ իրենց պատգամաւորը ճիշդ այդ անձին կուտայ իր քուէն: Բի՞շ կան, կ'ըսէ, մեր մէջ իրենց համոզումները ամէն օր փոխող մարդիկ, աղնուութեան կանոններէն չեղող անձնաւորութիւններ:

Օրմանեան, Մեսրոպ եւ Կարապետ Սրբազանները. — Հորիզոն Պոլսոյ Կրօն. Ժողովին կողմէ Օրմանեան Ս.ի Պատր. ընտրելեաց ցանկէն դուրս ձգուելուն առթիւ կը գրէ. «Ո՛վ իրաւունք չունի Պատրիարք լինելու, աւելի եւս իրաւունք չունի Կաթողիկոս լինելու»:

Նոյն թերթը յօդուածներու շարքով մը կ'ուրուագծէ կիսանքը Տ. Մեսրոպ Եպ.ի, զոր կը հռչակէ «ժամանակակից ազատամիտ հոգեւորականութեան ներկայացուցիչ, վշտակիր (Իզմիրեան) Հայրապետի, սիրդբունքներին համակիր, եւ նրան անկեղծ բարեկամ»: Հորիզոն կը հերքէ Մեսրոպ Եպ.ի հակառակորդներու ամբաստանութիւնը թէ նա պատրաստ է Հայ Եկեղեցին միացնել ուրիշ Եկեղեցւոյ հետ, խեղաթիւրելով իր յայտարարութիւնները՝ Մենչիկովի հետ տեսակցութեան մը միջոցին: Հերքելու համար հին առասպելը թէ «Հայ Եկեղեցին դուրս է Կաթողիկէ եկեղեցիներէն, եւ Լուսաւորչական կրօնը մի ազանգ է քրիստոնէութեան մէջ», Տ. Մեսրոպ Եպ. ըսած է. «Հայոց Եկեղեցին ո՛չ աղանդաւոր է ո՛չ հերձուածող. ան ալ նոյնպիսի Առաքելական Եկեղեցի է ինչպէս յունականը, եւ նոյն ծագումը ունի ինչ որ քրիստոնեայ մեծ Եկեղեցիները. քրիստոնէութիւնը մէկ է, բոլոր Եկեղեցիներու համար ալ Քրիստոսը մէկ է, մարդկային սղիստութիւնն է եղել պատճառ որ պատմական զանազան հանգամանքների ազդեցութեան տակ մէկ քրիստոնէութեանէն բազմաթիւ քրիստոնէութիւններ են առաջացել»: Այսքան պարզ եւ համոզիչ ճշմարտութիւն մըն է ահա զոր խեղաթիւ-

րեցին անոր հակառակորդներէն ոմանք. կը գոչէ Հորիզոն: Եթէ Տ. Մեսրոպ Եպ. ստուգիւ պատրաստ է Հայ Եկեղեցին միացնել ուրիշ Եկեղեցւոյ հետ, «հապ ինչո՞ւ Նովոյի Վրեմիան այսպիսի «օգտակար» մարդուն թողած, Օրմանեանի կամ Կարապետի թիկնածութիւնն է պաշտպանում»: Միեւնոյն թերթը նոյնպէս երկար յօդուածներու շարքով մը ձեռնարկած է մի առ մի վար առնել Տ. Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեանի համար Պ. Երուանդ Տ. Մինասեանի հիւսած դափնեպսակները, եւ զայն կը հռչակէ զուրկ իրեն վերապրուած ամէն բարեմասնութիւններէ: Շահեկան է, սակայն, այս առթիւ մատնանշել Տաճարի ներկայ թիւին մէջ Դաւրէժէն «Ականատես»ի մը կողմէ զրկուած թղթակցութիւնը, որ Հորիզոնէն լուրորովին տարբեր եզրակացութեան կը յանգի եւ ներքոջներով կը վերջացնէ իր առդերը: Մարդ կը չփոթի կը մնայ այս եւ միւս բոլոր ընտրելիներու մասին հրատարակուած հակընդդէմ կարծիքներուն առջեւ: Ապահովաբար կաթող. ընտրութեան պատգամաւորները շատ դիւրին գործ մը չպիտի ունենան իրենց առջեւ, եթէ ճշմարտապէս նդճամիտ եւ անկողմնակալ ուլով պիտի ջանան ընտրել Ամենայն Հայոց հայրապետական Դահլեւն արժանաւոր յաջորդ մը:

Կարողիկոսութիւնն եւ Ռուսիոյ Չարը. — Կաթող. ընտրութեան առթիւ թերթերու կարծիքներու այս քաղուածք՝ կը վերջացնենք Բահնիւմայի (Հայ բողոք. օրկան, Պոլիս) հետեւեալ ուշադրաւ հատուածով. — «Յայտնի է թէ Ռուսահայոց կարեւոր մէկ մասը փափաքող է Օրմանեան Ս.ը Կաթողիկոս ընտրել, կ'ըսուի նոյն իսկ թէ Ռուսիոյ Չարն ալ այդպէս կը փափաքի: Բայց ի՞նչ պատճառ կայ Չարին այս միջամտութեան Եկեղ. ընտրութիւն մ'է այս, ի՞նչ չահ ունի Չարը ասոր մէջ: Այս հարցման պատասխանը այն է թերեւս որ Կաթողիկոսը Ամենայն Հայոց Հայրապետն ըլլալով հանդիման, Ռուսահայոց ալ հոգեւոր Պետը՝ եւ ներկայացուցիչն է կառավարութեան մօտ, եւ անոր քաղաքական հայեացքներուն ընա-

կանաքար կարեւորութիւն կ'ընծայուի Ռուս կառավարութեան կողմէ, եթէ նա յարաբերութեան մէջ է յեղափոխականներու հետ, չառ հաւանական է որ Ռուսահայերն ալ հակամէտ ըլլան նոյն գաղափարին: Վերջին ժամանակներս կաթող. ընտրութեան մէջ կուսակցականաց կարեւոր մասնակցութիւնը, եւ վերջին կաթողիկոսներու յեղափոխական հակամիտութիւնները (?), զուցէ կասկած սնուցած են Ձարին մտքին մէջ էջմիածնի կաթողիկոսին քաղաքական դիրքին նկատմամբ: Իրաւ է որ Եկեղջ. ընտրութեան մը վրայ Ռուս կառավարութեան կողմէ ուղղակի ազդեցութիւն բանեցուիլը պատշաճ չի կրնար ըլլալ, եւ այսպիսի ձեռնարկ մը կրնայ բուռն բողոքներու պատճառով, եւ դուրսէ առիթ տալ կաթող. Աթոռին ուրիշ տեղ մը փոխադրուելուն: Մեր կարծիքն այն է որ ո՛չ Օրմանեան Ա. եւ ո՛չ ուրիշ ո եւ է եպիսկոպոս յանձնառու չըլլար նոյն Աթոռին վրայ նստիլ, Ձարին բաղձանքին համաձայն եւ ազգին կամքին հակառակ: Սա ալ ստոյգ է սակայն թէ Հայ Եկեղեցւոյ բարոյական շահը կը պահանջէ որ Հայրապետ մը, այն է Հոգեւոր Հովիւ մը որոշելու պահուն, ընտրութեանէն հետո պահէ քաղաքական եւ յեղափոխական ազդեցութիւններ եւ հնար եղածին չափ եկեղեցական եւ կրօնական գործողութեան մը սահմանին մէջ փակէ»:

որոշնակ է ներքին գործոյ նախարարին այս հարցումը, երբ մանաւանդ մտաբերուի թէ Համետեան ռէժիմը իսկ Խրիմեանի ընտրութեան, եւ Օսմ. Մահմանադրութեան հռչակումէն ետք Իզմիրլեանի ընտրութեան մասնակցելու համար աւելի մեծ թուով պատգամաւորներու անցագիր տրուած է: Թօգաւէն Տ. Շաւարշ Վ. կը հետադէ Պատրիարքարան թէ էջմիածնի մեկնելու համար իր անցագիրը սալու առարկութիւն կ'ընէ տեղական իշխանութիւնը: Ուրիշ գաւառներէ ալ Բ. Դուռը հարցում եղած է պատգամաւորներու անցագիր տրուելու մասին: Նոր եւ անակնկալ կնճիւղ մ'է այս, զոր կը յուսացուի սակայն շուտով հարթել, քանի որ առնուած տեղեկութեանց նայելով գաւառներէ եղած հարցումը յառաջ եկած է վերջերս Բ. Դուռնէն պուտաները ուղղուած զեկոյցէ մը թէ անցագիր պէտք չէ արուի Հայ Հոռմէական առաջնորդներուն, որոնք Իտալիոյ հետ պատեւրազմ եղած միջոցին Հոռմ կը հրաւիրուէին Սինօզ դուռմարկելու: Միւս կողմէ Ռուս պետական Մ. Չարիքով թուրք թերթերէն տեղեկանալով յարուցուած այս նոր արգելքը, հաւաստած է Պատրիարքարանէն իրեն ներկայացող պատուիրակութեան թէ երբ պէտք ըլլայ, Օսմ. կառավարութեան հարկ եղած բացատրութիւնը պիտի սրբուի, որպէս զի ինչպէս ասկէ առաջ եղած է, այս անգամ ալ ամէն զիւրութիւն ընծայուի:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԱԹՈՂ. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Ռուսիոյ ներքին գործոյ նախարարութեան մետասանկրոդ ժամուն հասած ծանօթ դժուարութիւնէն ետք, նոր եւ զարմանալի լուր մը տուին չաթմուս թուրք թերթերը: Ներքին գործոյ նախարարը հարցում ըրեր է Մեծ-Եպարքոսութեան թէ Կոնսթ. ընտրութեան մասնակցելու համար էջմիածնի գացող պատգամաւորներուն անցագիր տալ պէտք է թէ ոչ: Նրթեւեկի այս ազատութեան մէջ, շատ տա-

ԹՐԲԱՆԱՅՈՅ ՊԱՆԱՆՆ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ

Բարեւազդարար բուն պոռարութիւնը հարթուեցաւ վերջապէս: Եւ որ Կաթող. Տեղական Սուրէնեանց Արքեպէս հետագիր հասաւ Պատրիարքարան թէ Ռուս կառավարութիւնը ընդունած է Հայոց դիմումը, եւ կարող ընտրութիւնը պիտի կատարուի ինն ձեռով, եւ նշանակուած պատուիրակները նոյն իսկ պիտի կրնան ունենալ մեկէ աւելի ձայնի իրաւունք: Միայն թէ յանձնարարուած է փոխել մէկ քանի Ռուսահայ պատգամաւորներ, եւ ուրիշ կովկասահայեր ընտրել: Հետեւապէս Պատրիարքարանը անմիջապէս պիտի կրնայ հետադրել գաւառները, որպէս զի պատգամաւորները ճամբայ ելլեն:

Ազգ. Ժողովը անցեալ ուրբաթ թեր ու գէմբուռն վիճարանութիւններէ ետքը, Գ. Զօհրապէսի բանաձեւով շնորհակալութիւն յայտնեց Ռուս դեսպանին, իր տուած հաւաստիքներուն եւ ըրած ջանքերուն համար, ի վեր հանելով նաեւ որ զրուած արգելքը պիտի զրկէ թրքահայերը Կաթող. ընտրութեան մասնակցելու իրաւունքէն:

ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ մասին վերոյիշ լուրեր կը հասնին Պատրիարքարան: Տիգրանակերտի Առաջնորդ Տ. Զաւէն Եպ. հետագրած էր թէ նահանգին մէջ Իտալացիներուն դէմ տեղի ունեցած ցոյցերուն առթիւ Քրիստոնեայ ժողովուրդը սարսափի մատնուած է, եւ կը խնդրէր որ այս առթիւ գիտնականներ կատարուին Առաջնորդ Ս. Ը Հոկտ. 27 թուակիր նամակով մը մանրամասնութիւններ կուտայ, որմէ կը տեղեկանանք թէ սարսափ եւ խուճապ կը տիրէ քաղաքին մէջ, գիշերային ցոյցին առեւն հրազեններու արձակումովը: Թուրք թաղեր ընակող Հայ եւ Ասորի բնակչութիւնը ապահով թաղեր փոխադրուած են: Կուսակալը հրաւիրած է Ս. Առաջնորդը, որ ժողովուրդին սիրտը հանգրաւեցնելու համար զանոնք հաւաքէ եւ սրտապնդիչ խօսքեր ընէ: Գովելի է կուսակալին այս վանքը, սակայն երբ ոճրագործներ ազատ կը պըտըտին, չոր ու ցամաք սրտապնդիչ խօսքերը չեն կրնար գաղթեցնել սարսափը:

Հոկտ. 21ին նմանօրինակ ցոյցեր տեղի ունեցած են Ֆարդին, ուր թէ եւ ժողովուրդին կանխաւ ծանուցուած էր տեղի ունենալիք ցոյցը, սակայն վերջաւորութեան տառն արձակուած դնտակներէն կին մը սպաննուելուն համար դարձեալ սարսափ պատած է: Սյս ոճիրը գիտութիւն արգիւնք է, կ'ըսուի, քանի որ Ֆարդինի թուրք թաղը բլրակին վրան, իսկ զարնուած կնոջ տունը այդ բլրակին ստորտալ կը գտնուի: Եւ տեղական կառավարութիւնը ոչ ոք ձերբակալած է: Նմանօրինակ ցոյց մըն ալ տեղի ունեցած է Մարտին եւ սաստիկ հրացանաձգութեան տառն գնտակները ինկած են քրիստոնեայ

տուներու եւ եկեղեցիներու վրայ՝ ահ ու սարսափի մատնելով բնակչութիւնը: Արձակուած դնտակներէն զարնուած եւ վարկած է Ասորուց եկեղեցիին դմբթի խաչը: Լըճի, Հայնի քրիստոնեայ ժողովուրդներն ալ սարսափի մատնուած են թուրքերու ոչ-քարեկամական շարժումներէն: մէկ խօսքով բովանդակ Տիգրանակերտի նահանգին մէջ ապահովութիւն չկայ, եւ ժողովութիւն, առեւանգում, սպաննութիւն սովորական են: Նոյնպէս Մշոյ շրջակայ գիւղեր, ուր Բուրգեր կը շարունակեն իրենց շահասկութիւնները:

Տիգրանակերտի եւ Բաղէշի կուսակալութիւններու մէջ այս յաճախողէպ ոճրագործութեանց առաջը առնել շատ դժուար պիտի ըլլայ, քանի որ Կեդրոնը չի փափաքիր կտրուկ անօրինութիւն մը ընել ոճրագործներու մասին: Ներքին պործոց նախարարը փոխանակ Կաթող. պատգամաւորներու անցագրի խնդրով զբաղելու, մեծագոյն ծառայութիւնը ըրած պիտի ըլլայ հայրենիքին, եթէ ազդու հրահանգներով փութայ կասեցնել այս հակաքրիստոնէական շարժումը, իր սաղմնային վիճակին մէջ իսկ խեղդել տալով դայն:

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ խնդիրները նոր երեւոյթ մը ստացան, յորմէ հետէ կառավարութիւնը Պատրիարքարաններու հաւաքական քաղաքի պատասխանելէ ետք, օրէնքի կարգ անցնելու համար Օսմ. Երեսփ. Ժողովին վաւերացման զրկելու որոշում տուաւ: Բրոօսոս, Ֆէնէքի Պատրիարքարանին կէս պաշտօնական օրկանը, կ'ըսէ թէ Օրթոտոքսներու կրօն. ամենէն մեծ կեդրոնը եղող Յունաց Պատրիարքարանը բնաւ պիտի չհաւանի խնդրոյն քննութիւնը, որոշումը եւ վաւերացումը յանձնել Օրէնսդիր մարմնայն, որուն հիմնովին անձեռնհաս է: Պատրիարքարանին իրաւունքներն ու անանձնաշնորհումները Տէրութեան պարզ օրէնքներէն վեր կը գտնուին: Ազգ. Պատրիարքարանը տակաւին առիթ չունեցաւ խորհրդակցութեան առարկայ ընելու այս ամենակարեւոր խնդիրները: Զինուորական խնդիրներու մասին հետզհետէ լուրեր եւ

բողոքներ կը հասնին Այնթապէն Տ. Գա-
րեգին քննչ. Պօղարեան տարիքի սրբագ-
րութիւն կատարող երիտասարդի մը եղած
զրկանքը նկարագրելէ ետք, կ'ըսէ թէ
ԲԵՏԻՖ եւ մուսրանփրզներ քննութիւն
անցուցեր են Այս լուրը ղարմանք կը
պատճառէ մեզ, որովհետեւ մենք 299
թուականէն ստղին ինքիյաքներ ունինք՝
որոնք մէկ տարի ետքը պիտի մահնն րէ-
տիֆի կարգը: Պատրիարքարանին կը մնայ
թագրիրով մը այս պարագան, ինչպէս նաեւ
ղայիւններու եւ ուսուցիչներու խնդիրները
ներկայացնել Պատերազմական նախարա-
րութեան:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Ճէլալ
պէյ վերջին անգամ տեղապահ Ս.ին խոս-
տացիւր է յառաջիկայ տարուան պիւտժէին
մէջ անցընել տալ Կիլիկիոյ որբերուն եւ
այրիներուն սահմանուած 10,000 ոսկիի
գումարը:

ՎԱՆԷՆ մեղի կը գրեն թէ կանխաւ
տրուած որոշման համաձայն, Եգիպտոսի
Հ. Բ. Ը. Միութեան կողմէ տարեկան 600
ոսկի ծախքով Հայոց Միացիալ ընկերու-
թեանց հակողութեան ներքեւ Վարժապե-
տանոցը բացուած է արդէն, տեսչութեամբ
Յովսէփ է. Գ. Գոլումճեանի եւ ուսուցչու-
թեամբ Պ. Համբարձում Տ. Յարութիւն-
եանի, առժամապէս վարձուած չէնքի մը
մէջ, Հիմնական չէնք մը պիտի չինուի
յառաջիկայ գարնան, որուն առթիւ Միա-
ցիալին ներկայացուցիչ Պետրոս պէյ Գա-
փամաճեանի նախաձեռնութեամբ հանդա-
նակութիւն մը կատարուելով 450 ոսկիի
գումար մը գոյացած է, որուն 100 ոսկին
հոգելոյս Փանոս աղտ Գափամաճեանի կը-
տակադրամէն եւ 50 ոսկի Պետրոս պէյ
իր անձնականէն վճարելով, սոյն բարի
օրինակին հետեւած են Վանիցի պատ-
ուաւոր աղգայիներու Գնահատելի է Վա-
նիցի աղգայնոց, ի մասնաւորի Պետրոս
պէյի ոոյն նպատակադրմար եւ խիստ
կարեւոր ձեռնարկին յաջողութեան համար
ցուցուցած ջանքը եւ առատաձեռնու-
թիւնը:

ԵԿԵՂԵՑ. ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ. — Համե-
մատականի մնացած չորս երեսփոխանե-

րու ընտրութիւնը կատարուեցաւ Եջ. օր.
հրաւիրեալ 114 եկեղեցականներու 90ին
մասնակցութեամբ (41ը նամակով), եւ ե-
րեսփոխան ընտրուեցան՝

Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեան 66

Տ. Տրդատ Բն. Պօյաճեան 58

Տ. Անանիա Վ. Հազարապետեան 46

Տ. Եղիշի Վ. Պապաեան 44

Իսկ Տ. Տիրայր Ծ. Վ.ի տեղ ուրիշ ե-
րեսփոխանի մ'ընտրութիւնը մնաց յառա-
ջիկայ չարթուան:

ԵՐԵՒԱՆԻ պատուիրակներու ժո-
ղովը Հոկտ. 30ին քուէներու մեծամաս-
նութեամբ մերներ է Օրմանեան եւ Կա-
րապետ եպիսկոպոսներու կաթող. թեկնա-
ծութիւնը: Խորէն Եպ. Մուրադեղեան՝
47, Եղիշէ Արքեպ. Դուրեան՝ 41, Մեսրոպ
Եպ. Տ. Մովսէսեան՝ 39, Գէորգ Արքեպ.
Մուրէնեանց՝ 37 քուէով կաթող. ընտրելի
նշանակուած են Պատգամաւոր ընտրուած
է Պ. Գ. Տ. Խաչատուրեան:

ԿԱԹՈՂ. Խնդրոյն հետեւանքով Կով-
կասի մէջ բուռն վէճ մը յառաջ եկած
եւ միեւնոյն խուճերու պատկանող ան-
ձերու մէջ երկպառակութիւն ծագած է:
Մշակի աշխատակիցներէն մաս մը բաժ-
նուելով Մ. Խանազատեանցի առաջնորդու-
թեամբ Մամուլ անունով շարաթաթերթ
մը հրատարակել սկսած է Տփղիսի մէջ:

Այն բոլոր նոր բաժանորդները ո-
րոնք հիմակուընէ կը բաժանորդա-
գրուին Տաճարին՝ յառաջիկայ տար-
ուան համար, մինչեւ տարեգլուխ հրա-
տարակուելիք թիւերը 2ՐԻ ՊԻՏԻ ՍՏԱ.
ՆԱՆ:

Արտոնատէր ՀՄԱՅԵԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԲԱՄԱՃԵԱՆ

“ՏԱՃԱՐ”-ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ գանձը իրաւունք ունի մէկ թերթ ձեռնարկու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ ԿՐԸՆԴՈՒՆՈՒԻՆ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԻ ԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսնասահմանի համար	» 10 Ժրանգ
Ռուսիա	» 4 րուբլի
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռքէ կը ծախուի պրակք	40 փարա

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐԸՆԱԹՆԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Աբաթն Քհնյ. Դերձակեան
ԱՂԵՔԱՍՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Քհնյ. Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօ.
Դոս Վրդ. Գաթիթեան
ԱՅԵԹՄ. — Տ. Գաթիթեան Քհնյ. Պողար-
ԱՍՏՐԱԶԱՐ. — Տ. Սերորէ քն. Պարմաշեան
Եան
ԱՅԻԹՆ ԳՈՐԱՆԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Քհնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.
ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սարէն Ծ. Վ.
Գաթիթեան
ԴԱՅԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եղս.
Կիւլէսէլեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Քհնյ. Սար-
գիսեան
ԵՕՉՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եղիսկ.
Դիմաքսեան
ԵՐՁԵԿԱՍ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ
Քհնյ. Սրամեան
ՉՄԻԻՆԻՍ. — Տ. Յարութիւն Քհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ քհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. քհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապեան քհնյ. Ալաւեան
ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Քհնյ. Մարտոսեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Քհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՍԻՐԻԱ. — Տ. Ռակի Քհնյ. Պրպիւսեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Քհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Յարութիւն քհնյ. Աստարտեան
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-
դան Ծ. Վ. Գասպարեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Տ. Կուսմի Քհ.
Յիւրգաթեան
ՊԱՆՏՐՄԱ. — Առաջնորդ Տ. Մուշէս Ա.
Եղիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՈՒՐ. — Տ. Մկրտիչ Քհնյ. Մըր-
նիկեան
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Գէորդ Ծ.
Վրդ. Ալաւեան
ՍԵՔԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Քհնյ. Օտարաշեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հագեւոր Տեղապահ Տ. Կարա-
պետ Քհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմեսթիս Քհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մարտիս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերորէ Վ.
Սամուէլեան
ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեղապահ Տ. Վահան-
պետ Քհնյ. Բիւպրեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պաակ Վրդ.
ՅՐԷՁՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ

Գրաշարական շատ կարեւոր վրիպակ մը անդի ունեցած է գծադրարար Տանանի անցեալ 44րդ թիւին մէջ, էջերու սխալ կազմութեամբ մը:

710րդ էջի առաջին սիւնակէն ետք, երկրորդ սիւնակը շարունակութիւնը չէ անոր: Լուրերը իրենց կանոնաւոր շարունակութեամբ կարգադրու համար պէտք է նոյն էջի Ա. սիւնակէն ետք կարգադր 711րդ էջի Ա. սիւնակը՝ 6րդ տողէն սկսեալ, եւ շարունակել մինչեւ նոյն էջի Բ. սիւնակի 21րդ տողը, որմէ յետոյ ետ դառնալ 710րդ էջի Բ. սիւնակը, եւ զայն ամբողջացնել ետքը շարունակել 711րդ էջի Ա. սիւնակի հինգ տողերն ալ, եւ յետոյ անցնիլ նոյն էջի Բ. սիւնակի 22րդ տողը:

Այս կարեւոր վրիպակին համար ներում կը լծադրենք Պատ. Ընթերցողներէն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

“ՅԱՅՐԵՆԻ ՏԱՐԵՑՈՅՑ”

Խաղմեց՝ ՍՍ.ՀԱԿ ՄԵՍՐՈՊ

Բոլոր անոնք որ բռնին Հայկական ոգի ու կարօտ մը դէպի ցաւակոծ Հայրենիքը, բոլոր անոնք որ կ'ուզեն վերապրիլ

հայրենի հողին բաբախումը հզօր, Սէրը ու Տառապանքը, թող շտապեն գնիլ «Հայրենի Տարեցոյց»ը, որ Զարուհակութիւնն է «Գաւառին տարեցոյցը»ին եւ կուգայ մեծ պակաս մը լեցնելու: Աննախընթաց բաժիններով, 70է աւելի նոր նկարներով, գրական, դիտական, ընկերական պէսպիսի ու անթիւ նիւթերով ճոխացած այս նոր Տարուան գիրքը ՀԱՅԵԼԻՆ է Հայ Սրտին ու մաքին:

Դին՝ 7 գահեկան Դիմիլ՝ դրամաճանրերուն, բոլոր ծխաւաճառներուն եւ հեղինակին՝ Չափաւճար, Մեծ Նոր Խան, թիւ 45:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԳԱՆՁԱՐԱՆ

Բարձրագոյն դասընթացի

Ծանօթ գրադէտին ընթերցանութեան այս դասընթացին տարրական եւ միջին հաստիները այնքան ջերմ ընդունելութիւն գտան՝ հազիւ մէկ երկու տարուան մէջ երրորդ տպագրութիւն հասնելով: Ներկայ բարձրագոյն դասընթացը խտացումը կրնանք նկատել թրքահայ եւ Ռուսահայ գրականութեան լաւագոյն էջերուն: Հեղինակներու կենսագրութիւններն ու պատկերները, բնաշխարհի լուսատիպ պատկերներ, հանրագիտական բացատրութիւններ, եւն. յանկուցիչ եւ շատ օգտակար հրատարակութիւն մը կը հանդիսացնեն այս աշխատուած գործը: 500 էջ, 12ու կէս դրշ.: Հրատարակութիւն Յ. Գրչնանեան Ղրատան:

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Յ. ՏՕՂԱՄԱՆԵԱՆ

Սուրբան-Հանամ Մօրա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ